

## ԳՐԱԿԱՆ

**ՍՓԻՌՈՔԱՀԱՅ ԱՐՁԱԿԻ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ  
( 20-30-ական թթ. )**

20-րդ դարասկզբին, Առաջին աշխարհամարտի տարիներին - (1915-23) քուականներին, Երիտրուրֆերը, բնաշնչելով և տեղահանելով Արևմտահայաստանի հայութեանը, իրագործեցին մարդկութեան պատմութեան ամենազագրիլի ոնրագործութիւններից մէկը: Թուրքիայի գերիշխանութեան սահմաններում բնաշնչուց Արևմտահայաստանի հայութեան մեծամասնութիւնը՝ 1,5 միլիոն և ամելի բնիկ հայեր: Մեծ քուով հոծ զանգուածները, հալածական և դժուարուղի անապատները կտրելով, հանգրուանեց աշխարհի տարբեր ծայրամասերում: Այսպիսով, Երիտրուրֆերի ձեռքով աւարտին հասցուց Սուլթան Համիտի ոճրագործ Քաղաքականութիւնը՝ « Հայաստան առանց հայերի... »:

20-րդ դարում հայերի գաղթօջախներ հիմնուեցին աշխարհի տարբեր երկրներում: Դրա աշխարհագրութիւնը լայն է՝ Ամերիկա, Երոպա, Մերձաւոր Արևելք, Բալկաններ, Ռուսաստան...: Ամենուր, սակայն, ուր հիմնաւորուել է հայը, կազմակերպել է իր մտաւոր կեանքը, սոցիալ-տնտեսական կայունութեան ձգտել և մասնակցելով միշավայրի (տուեալ երկրի) ու պատմութեան գործնքացին, վերստեղծել իր դարաւոր մշակոյքն ու հոգևոր արժեքները: Պատմամշակոյթային իմաստով գրականութիւնը, արուեստը, մամուլը տուեալ դարաշրջանի և տեղի գաղթօջախի հանրութեան սոցիալ-պատմական կեցութեան արդիւնքն է, ուստի այն ուսումնասիրութեան առանձնայատուկ ոլորտ է:

Ելնելով պատմականութեան և խնդիրների միասնութեան օրինաչափութիւնից, կարող ենք ասել, որ գաղթօջախների մշակոյթը և հայաստանեան մշակոյթը մի ամբողջական համակարգ է՝ միայն ուրոյն խնդիրներով և հարցադրումներով, որի բննութիւնը ներառում է աւանդոյթը և նորագումական խնդիրների հանգոյցը: Ուստի, բնական է, որ դարավերջին առաջացաւ մէկ համակարգում երևոյթի տիպարանութեան և օրինաչափութիւնների էլուրուցիան (հոլովոյթը) ուսումնասիրելու հարցը, բանզի մէկ ժողովրդի պատմութեան մէջ հնարաւոր չէ երբեւ, որ հակադրութիւնների օրենքը ինքնին չհանգի միասնութեան գաղափարին: Յաղթահարելով անտագոնիզմը և ժխտման կեցութեան պատմականութեան դրոյթը, ասենք, որ ճակատագրով աւերուած մի ժողովրդի հոգեւոր աշխարհում չէր կարող կուտակուած չլիներ ներքին միաձուլման, պատմական կորուստների հաղթահարման, ի վերջոյ... դարաւոր տառապանքին հակադիր պատմականօրէն ելք առաջադրելու, իր տեղը աշխարհում նշգրտելու, մարդկութեան ցաւի և իր ցաւի մէջ կեցութեան խորհուրդը պեղելու...: Հաւանարար, ծանր, պատմականօրէն ժառանգած նակատագիր է սա, որ աշխարհի քարտեզի վրայ ոչ մի ժողովուրդ չ'ունի, ինչպէս և Սփիւրք անուանումը՝ իմաստային իր համարժեքով, ոչ մի ժողովուրդ չ'ունի...: Այստեղից է ահա Սփիւրք, սփիւրքահայ գրականութիւն, որ սկսած 20-ական

քուականներից, ձևաւորման իր առաջին շրջանից տարրեր բնորոշումներով է բնութագրուել՝ գաղութահայ, արտերկրի, արտասահմանի...: Այս բնութագրումները Վ. Գարրիելեանը թերի է համարում: Սփիլքահայ գրականութեան եզրը, սակայն, ըստ գրականագետի, «հայութեան մի մասի նոր գոյավիճակն է», «կեցութեան ինքնակամ ձևը», «ուրիշ հոգերանութիւն», որի պատմական վերլուծութիւնը պէտք է ունենայ իր անուանումը՝ սփիլքահայ գրականութիւն:

Գրականագիտական առումով ոչ պակաս կարենոր է շրջարաժանման խնդիրը: Պատմական եղելութեան գուգադրութիւնը, իհարկէ, բաւարա պայման է, բայց ոչ ամրողական: Խնդիրն այն է, որ դեռևս հետեղն նեան առաջին տարիներին, այն գրողները, որոնք հալածուցին դամակողեան սրից և ապաստանեցին տարրեր երկրներում, գրական ձևաւորման առաջին շրջանը ապրել էին հայրենիքում, ինչպէս, օրինակ, Շամբը, Սհարոննեանը, Օշականը, Թէթեանը, Կոստան Զարեանը: Գրականագիտութեան մէջ այս փաղանգը, որն անուանում է նաև «անապատի սերունդ», անմիշականորէմ կրելով աւագների աւանդոյքը, հաւանարար պէտք է բնենել զուտ պատմականի գուգահեռ կապում: Ուստի այստեղ բնական է գրական-պատմական նոյն շղթայում, նորագոյն գրականութեան պատմական-տիպարանական ոլորտում ներառել հարցի էութիւնը: Երկրորդ, խուսափելով նոյն պատմական գուգահեռի «գերիշխանութիւնից» նաև խորհրդային գրականութեան պատմութեան առնչութեամբ, գրական նորագոյն շրջանի սկզբնաւորման շրջանը զուգադրելով աւելի վաղ շրջանի՝ 20-րդ դարի 10-ական քուականների հետ, ինչպէս հայ, այնպէս էլ համաշխարհային գրականութեան տեսական առնչութիւնների և նոր հարցադրումների ոլորտում բնենելով, կարող ենք հարցը դիտել զուտ պատմական-տիպարանական միամբողջական-մէկ համակարգ և նրա ներսում, որի տեսական-պատմական գարգացման ընթացքը նոյնն է և խորհրդահայ և սփիլքահայ գրականութեան մէջ գոնեւ մինչև 30-ական քուականները:

Հատ վերոհիշեալի՝ պատմական առումով անհնար է խուսափել Տերեանի «Հոգևոր Հայաստան» և «Հայ գրականութեան գալիք օրը»(1914) յօդուածների որոշ դրոյթներից, որոնք իրենց ներքին մղումով հարցադրումներ են ներառում՝ գրականութեան նոր ձևի, բովանդակութեան, լեզուի և պատմական հոգերանութեան առնչութեամբ: Գրական նորագոյն հոսանքները, որոնք դարի «անկումային» տրամադրութիւնները և բաղաբակրթութեան «փակուղու» հարցերն էին բնեում համաշխարհային պատմութեան, իմաստափրութեան, գրականութեան մէջ, այս կամ այն չափով իրենց դերը կատարում էին սփիլքահայ և խորհրդահայ գրականութեան ամրողացման համակարգում, ինչպէս նաև 10-20-ական քուականների ձևաւորման, այնուհետև՝ 30-ականների շրջանում:

Սփիլքահայ գրականութիւնը, առհասարակ, այդ պրոցեսով (ընթացքով) ուրոյն, ազգային-պատմական արդիական հարցադրումների, ազգային-հոգեկոր ինքնութեան, հաւաքականութեան ինքնապահպանման բնագդով, պատմական արդարացիութեան, ազգային կեցութեան

1. Վ. Գարրիելեան, Սփիլքահայ գրականութիւն, Երևան. 1987, էջ 14

«վերադարձի», օտար ափերում ձուլման վտանգի, լեզուի շերտերում՝ իր ինքնութեան պահպանման մղումով, մնում է համաշխարհային գրական ընթացքի մի մաս, որ, ստեղծուելով տարբեր գաղթօջախներում, պատմական միասնական ընթացքի արդիւնք է...: Ուրեմն, ենելով սրանից, պատմական շրջաբաժանման մէջ 20-30-ական թուականները, ինքնին նեղ իմաստ է կրում, ուստի, ներառելով այս ընթացում նաև 10-ական թուականները, մենք պատախանում ենք, հաւանարար, գեղագիտական առումով, բուն հարցադրմանը, որը պատմական հոլովոյթով շարունակում է մինչև 60-ական թուականների սկիզբը, բայց որոշակի փոփոխութիւններ է կրում սկսած 80-ականներից...:

Պատմական ձևաւրման իր սկզբից, այնուամենայնիւ, սփիւքահայ գրականութեան ընթացքը և պատմականութեան խնդիրը կասկածի է ենթարկուել: Աւետիս Սհարունեանը մի պատկերաւոր օրինակ է թերում՝ սփիւքի հարատեսութիւնը և, հաւանարար, գրականութեան ընթացքը համեմատելով ջրի «ՔԱՄՔԻ» հետ: Ջրի «ՔԱՄՔԸ» ակունքից կտրուած և ետևից հոսանք չըերող, այսինքն, անուժ ջրի հատկութիւն ունի, որը, սակայն հոսում է և դեռևս մնացորդացով ողողում նաև «հարեւանի արտը»<sup>1</sup>...: Սոհասարակ, մաքառման և գոյատեսութեան ինչպիսի նեերքին ուժ և հատկութիւն պէտք է ունենար մարդը, ել չեմ ասում արմատից և հողից կտրուած այս հաւաքականութիւնը՝ հայը, որ կարողացաւ ձևաւրուել, ստեղծել հոգեոր պատմութիւն...: Կասկածներ այսօր կ կան...: Բայց հետաքրքիր է մի բնութագրութիւն. «Սփոփանք է տեսնել, գրում էր դեռևս Յակոբ Սիրունին 20-ական թուականներին, - որ մեր ցեղին այս զարհութելի նզնաժամին մէջ... դեռատի տղոց ոգևորուած բազմութիւն մը կայ, որ խումբ-խումբ գեղեցկութեան տանարին դուռը կը վագէ՛ ներս մտնելու անհամբեր»<sup>2</sup>:

Սփիւքահայ գրականութեան ձևաւրման շրջանում խնդիրներն առ հասարակ, բայց գրականագիտութեան, շատ չեն: Այն գաղթօջախները, որոնք մինչև Եղեներ աւանդոյթներ ունեին և ձևաւրումը հաւաքականութեան պատմականօրէն այնքան բարդ չէր, ինչպէս Ֆրանսիայի և Ա.Ս. գաղթօջախներում, գեղարուեստական նուանումներ աւելի շուտ արձանագրուեցին: Սակայն պէտք է նշել, որ գրական ընթացքի այս նախահիմքում կարեւոր են խնդիրների մի քանի շրջանակներ՝ առաջին՝ հեղինակները դեռևս Եղենեի ականատեսներն էին շրջանակներ՝ առաջին՝ հեղինակները դեռևս Եղենեի ականատեսներն էին և բանց հետաքրքում էր հայի գոյարանութեան խնդիրը, ուստի պատմական նոր պայմաններում հայի կեցութիւնը պատճառարանում էր նոր աշխարհագրութեամբ, կենցաղով, բարեկրով և կար սպասումը (ըստ Վ. Գարրիելեանի դիտարկման) վերադարձի:

Երկրորդ՝ գրականութիւնը դեռևս խիստ հայկական բովանդակութիւն ունէր, սուր էին հայկական հարցադրումները, կարեւոր էր գրողի անհատականութեան խնդիրը, անգամ կուսակցական պատկանելութիւնը<sup>3</sup>:

Երրորդ՝ սփիւքահայ գրականութիւնը կրում էր տուեալ գաղթօջախի, հետևարար և համաշխարհային գրական պրոցեսի

1. Ա. Սհարունեան, Երկեր, Պէյրուք, հ.1, 1947

2. Յակոբ Սիրունի, «Նուասարդ» տարեգիրք, Պուէրէ, Ա., 1924, էջ 118

3. Տես Ն. Տեստեկիս, «Հայրենիք», 1925, հ.10, էջ 58:

ազդեցութիւնը, և ձգտում էր տուեալ ըւթացքը շաղկապել հայրենիքի (կորուսեալ և խորհրդակայ) գրական աւանդների և արդիական հարցերի հետ:

Այս յատկութիւնները ընդհանուր դրոյթներով բնորոշ են սփիտքահայ գրականութեան ձևաւրման շրջանին: Հետևարար, ամբողջական լինելու համար ասենք, որ գրական այս ընթացքից դուրս չեն նաև օտարագիր հայ գրականութիւնը հետևեալ պատճառ արանութիւններով:

Եթէ տեսական-պատմական հարցադրման մակարդակում ենք բննում հարցը, հակադրամիասնութեան մի շղթայում՝ լեզուն, որ առաջնային պատմական դեր ունի, իր մեջ ներառում է գիտակցութեան, ինքնանաշնաշողութեան յատկականութիւնը: Լեզուն բնաշխարհիկ և միակ իմաստային-հոգենոր հանգրուանն է, որով լուծում էր հայ գրողը և պատմական-կիրառական, և հոգևոր-արժեքային իր էութեան «օրիենտացիան», բայց միւս կողմից՝ առաջանում էր պատմական այլ գործառոյթի, զուտ հաղորդակցութեան խնդիրը, որը կարողանում էր լուծել կամ կարող էր լուծել հայ գրողը անցնելով նաև օտարագրութեան: Պատմականուն այս պատճառարանութիւնը իր հետևութիւնն ունի միայն մի առումով՝ եթէ կար ինքնանաշնաշողութեան հարցը, ապա հոգու հաղորդակցումը օտարի հետ պակասում էր հային... (պատմական յարաբերութեան առումով)...: Ինչեւ, սա պատմական նակատագրի հարց է: Դրական թէ բացասական է երևոյթը, եականը սա չէ: Կարելի է աւելի հեշտ արձանագրութեամբ նշել, թէ լեզուն է միակը և այդ հորիզոնից այն կողմ կրկին լեզուի հորիզոնն է... կամ... հայ գրողը, ժամանակի ընթացքում անցնելով օտարագրութեան, պարտադրուած է եղել, վատ գիտէր իր լեզուն և այլն (ինչպէս բացատրում է գրականագիտութեան մէջ հանախ): Բայց խնդիրը դրանով աւելի է մթագնում միայն...:

Հարցի նշագրիտ-իմաստային լուծումը պատմական յարաբերութեան, ինչպէս նաև՝ գեղագիտական ամբողջութեան, նրա վերլուծութեան, համակարգի նանաշնորհութեան հարց է: Սփիտքեան իրողութեան պատմականութիւնը, ներկայի և ապագայի միջով հատումը, որ մերք մղում էր կարօտի հայացքով վերապրել իրականը և կորուսեալը, ինքնանաշնաշողութեան և գոյութեան հոգևոր-մարդկային խարիսխներ գտնել ներկայում, նահանջելով անցեալի արժեքներից, ի վերջոյ թեև միասնական, բայց գեղագիտական համակարգի ձևաւրման առումով ուրոյն եզրագծեր և կառուցուածքային ներքին օրինաշնորհութիւններով է օժտում գրական երկը, որոնցով պայմանաւորուած էին 20-30-ականների սփիտքահայ արձակի ուղղութիւնները: Գեղագիտական համակարգը այս դէպքում արձակի ժանրային տիրոյթում կառուցուածքի իմաստային, հետևարար և՝ լեզուական, տիպարանական որոյն լուծումներ էր պարտադրում: Պատմականի և արդիականի ենթատեխնում բնորոշ յատկութիւններով էին ընդգծուում «կարօտը» և «նահանջը», ուստի գեղագիտական համակարգում պատմողը, ես-ը, լինելով (կրելով այն) մի միջավայրում, իր «նախնական» իմաստով հանգում էր ինքնօտարման, մաքառումով «լոռում» էր կարօտի կեցութեան հորիզոնում, «նահանջի» արձակում՝ ջղածիգ մաքառում՝ ժխտումով վերաթերթելու անցածը, նոր կեցութեան սահմաններում հաղորդակցուելու թերես պատմութեան նոր ընթացքին...:

իհարկէ, երկու դեպքում էլ կար «սայթաբումի», ուղղակի սխեմատիզմի հանգելու գեղագիտական հասկացութիւնը: Յաղթահարումը պայմանաւորուած էր արձակագրի (գրողի) գտարիւն տաղանդով, որ կրում էր պատմութեան, գրական աւանդոյթի հոգեւոր բեռը, ուստի գրողը ուրոյն ենթագիտակցութեամբ գտում, վերստեղծում էր «իր» իրականութիւնը: Համաստեղը, Շուշանեանը, Վ. Հայկը, Բ. Նուրիկեանը, Ա. Հայկազը կարօտի գրականութեան, ներկայի և անցեալի պատմականութիւնն էին ներկրում այս առումով, իսկ Շահնուրը և «Մենքի» ներկայացուցիչները՝ ես-ի պարագծում էին երկփեղկուում նոյն դրոյթը՝ կրկին վերադառնալով անձի նախակեցութեան ոլորտին, որ կեցութեան շառաւիդում բննւում է (անմիջականօրէն) կեցութեան եզակիութեան և ինքնութեան նշանակութեան, նպատակի միասնութեան մէջ...: Երկու դեպքում էլ ընդհանուրն այն է, որ հակադրամիասնութիւնը վերլուծում է պատմականութեան խնդրադրոյթով: Եթէ խնդիրը զուտ համաշխարհային գրական ընթացքի ենթատեսում դիտենք, ապա կարօտի գրականութեան կերպարը հակադրուում է (հոգեոր-իմաստային արժեքով) բաղաբակրութեան ներկային իր նախնականութեամբ, մաքրութեամբ, «իդեալական միֆականութեամբ», հոդի նկատմամբ «սուրստանցիոնալ միասնութեան» գգտումով և այլն: Եւ, ինչու չէ, ազգային վեհութեամբ և ցաւով, կորուստի և մարդու ինքնութեան բնաշխարհիկ տիեզերականութեամբ...: Նահանջի կերպարաստեղծման և տիպարանական առնչութիւնն այս պարագծում երկատուած է. ինքնօտարումը և ես-ի «նեղքումը» նոր միջավայրում այն հիմնագիծն է պարտադրում գրողին, որ մաքառման, մեղսաբաւութեան և դրամատիզմի շեցտերն է պարագծում կերպարի վարքագծի և գործողութիւնների պարագնքալութեան (երկուութեան), բազմանշանակութեան, կոահոդի մտասկեռ ներաշխարհում: Ամէն «Քայլափոխի» իրավիճակը սահմանային եզրի մօտեցնելով, «պայթունավտանգ», ներսից երկփեղկուղ, հետևարար և՝ անաւարտութեան գեղարուեստական կաղապարի տեսահայեցութեամբ է օժտում տուեալ արձակը (օրինակ՝ Շահնուրի «Նահանջը առանց երգի» (1929) վեպը, «Հարալեզներու դաւանանութիւնը»(1933) շարքը):

Առ հասարակ, կարող ենք նաև կառուցուածքային և գեղագիտական ընդհանրութիւններ գտնել թէ սփիւրքի, թէ խորհրդային գրական ընթացքի միջև, բայց հստակ է ամենակարևորը՝ գրողի տաղանդը առաջնային-պատմական արժեքային նշանակութիւն ունի այս պարագայում և այն գլխաւոր, եթէ չասենք՝ զուտ պատմական միասնութեան եզրն է, որից «սկզբնաւորուելով», օրինակ, Համաստեղը և Բակունցը, Դեմիրենեանը և Զորեանը որոշ գործերում, Շահնուրը՝ մի քանի պատմուածքներում, «սխեմագերծում են» իրականութիւնը, երևոյթները բննում բուն պատմութեան «ենթատեսում» և դրա հակադրամիասնութեան մէջ՝ կենդանի թրթիռով վերապրելով իրականութիւնը, կենդանի զարկերակի և հոդի շնչառութեամբ վերապրելով մարդու տառապանքն ու կեանքը, լոյսը, ոգին...:

Այսպիսով, կարելի է եղանակացնել հետեւալը՝ հենց ձեւաւրման սկզբից սփիւրքահայ գրականութիւնը ընթանում էր երկու ուղղութեամբ՝ կարօտի և նահանջի: Դրանք տարբերում էին իրենց թեմատիկայով, բովանդակութեամբ, գաղափարներով, հետևարար՝ գեղագիտական և ձեւարանական-կառուցւածքային առումով: Բայց պատմականօրէն կրում էին ժամանակաշրջանի (20-30-ականների) ներքին միասնական

ազդեցութիւնը, նպաստառում՝ նոյն հարցադրումների համակարգում գեղագիտական-պատմական լուծումներ գտնելու: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ պատմական իրականութեան մէջ այդ երկու ուղղութիւնները ներքին-միասնական «տրոհումից» ձգտում էր միասնութեան: Եւ թէև ձևաբանական-էսթետիկական (գեղագիտական) առումով դրանք տարրեր հոսանքներ էին, բայց երկու ուղղութիւններն էլ ներկայացնում էին հայ մարդուն՝ իր պատմական նակատագրով և հոգևոր ներաշխարհով: Ուստի, եթէ տուեալ ուղղութիւնները որոշ իմաստով պատմականութեանը պարտադրում էր «իր սխեմատիզմը» ժանրային և տիպարանական փոխադրեցութեամբ, ապա երևոյթի բնութեանը վերագրելով զուտ պատմական իմաստ, կարող ներք եզրակացնել, որ այն դրսեւրուել է պատմական փոխառնչութեամբ, աւանդոյթի ներկրմամբ, ինչպէս նաև համաշխարհային գրական ընթացքի մէջ ներառուելու չափով:

Վերջին այս հանգամանքը համաշխարհային գրականութեան ազդեցութեան հարցն է, որ իրաֆանչիւր գաղքօջախում դրսեւրուելով իւրովի, տուեալ պատմական շրջանի ազդեցութեամբ, հայ գրողին «կորում էր» իր լեզուական հորիզոնից, ազգային հոգերանութեան և լեզուամտածողութեան բուն առանցքից, որպէսզի կարողանայ հայկական «ոգին» հաղորդակցի ժամանակաշրջանի, տուեալ գաղքօջախի և համաշխարհային պատմական և գրական ընթացքի հետ...: «Նահանջից» մինչև լեզուական օտարումը, նաև կերպարի ինքնօտարումը, եթէ չընկալենք զուտ պատմական գեղագիտական հասկացութեամբ, ապա երևոյթը նիշտ չենք գնահատի...: Ուիիհամ Սարոյեանի օրինակը համընդհանուր է այս առումով: Նա է, որ առաջադրում է «ազգային ոգու» տեսութիւնը՝ ասելով. «թէև գրում եմ անգլերէն... բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Լեզուն, որով գրում եմ, անգլերէն է... բայց ոգին, (ընդգծումը իմն է՝ Ս.Ս.) որն ինձ մղում է գրելու, հայկական է: Ուրեմն, ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին», - հստակեցնում է իր ասելիքը Ուիիհամ Սարոյեանը:

Ինչպէս տեսնում ենք, երևոյթը զուտ պատմական մեկնարանութիւն ունի: Լեզուն և ոգին տուեալ դէպում պատմականօրէն համարժեք են և ձգտում են միասնութեան...: Նոյն ազգային «ոգու» արտահայտութիւններն են սակայն ոչ միայն օտարագիր հայ գրողները, այլև՝ ծագումով օտար գրողները (Կուրտ Վոնեկուր, Ֆրանց Վերֆել): Ուստի, եթէ պատմական հիմքով է բացատրում հայ գրողի «անցումը» օտարագրութեան, ապա երկրորդ դէպում՝ կարելի է ասել, որ օտար հեղինակները, մերձենալով հայ-օտարագիր գրականութեանը, նպաստում էին նրա ձևաւորմանը թերևս պատմական-գեղագիտական առումով: Օրինակ, օտարագրութեան անցնելով, մեծ համբաւ և հրաշալի արձակ են ստեղծել Տիգրան Գույումնեանը՝ «Կանաչ գլխարկ» /1927/ վեպով, Արմեն Լիւրենը (Շ. Զահենուր): «Ողջ Թրաֆալգարը»/1939/, «Գիշերային տեղափոխութիւն» և, իհարկէ, Լևոն-Զաւէն Սիւրմելեանը՝ «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» /1945/ վեպով: Կոստան Զարեանը, օրինակ, ստեղծագործական առաջին շրջանում գրում էր ուսւերէն,

<sup>1</sup>. Ուիիհամ Սարոյեան, Ընտիր երկեր, Հ. 4, Սրբան, 1991, էջ 858:

ֆրանսերէն, իտալերէն.... «Մեհեան» հանդէսի /1914/ հանգանակը կ. Զարեանը յայտնի է, որ գրել էր ֆրանսերէն և Դ. Վարուժանն է, որ այնուհետև թարգմանել էր հայերէն և այլն:

Ուրեմն, խնդիրը գեղագիտական-պատմական մեկնաբանութիւնից զատ, տարրերակում է առաջին հերթին օտարագրութեան առեղծի (պրոբլեմի) ներքին բազմազանութեամբ, շերտաւորումներով: Բայց ակնյայտ է՝ ա) օտարագիր հայ գրականութիւնը սփիւռքի զարգացման ներքին հակասութիւնների և գեղագիտական որոնումների արդիւնք է, թիւ այն նպաստում է սփիւռքի գրականութեան ձևաւորմանը՝ գեղագիտական նոր հուն մտնելու առումով, գ) օտարագիր հայ գրականութիւնը պատմագործառական արժեքային համակարգ է, որի ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է բննել ոգու և լեզուի փոխառնչութեան կապով....:

Դարը, դարի ոգին, դարասկզբի եղենն-ոնիրը այնքան մեծ ազդեցութիւն ունեցան հայի նակատագրում, որի իմաստաւորումը թերևս միայն մի «անցումային» պատմական ժամանակաշրջան չէր սպառելու, ուստի բնական է՝ և կարօտի, և նահանջի, և օտարագիր հայ գրականութիւնը սկզբնաւորումից ի վեր փորձում են պատախաններ փնտրել, հայի նակատագրում տեսնել տիեզերական և մարդկային հայր: Են բնաւ գրականութեան պատմութիւնը սակաւ անգամներ չի փորձելու հանգուցելու այս խնդիրը հակադրամիասնութեան հարցումների այս պարագծում....:

## Բ

1920-ական թուականներից սկսած, սփիւռքահայ գրականութեան ձևաւորման ակունքում, թերևս միասնական պարագծում, հակադրութեան եզրում այն հեղինակներն ու նրանց ստեղծագործութիւններն են, որոնք ապրել են Եղեննը: Հոգենոր ներկայ պարագծում տեսանելին և առաջինը երեկուայ գիւղն էր կերպաւորուող առանցքում՝ հայրենիքի տիեզերական այն անկիւնը, որ շնչում էր յաւերժի հոգենոր ժամանակը՝ գոյութեան ներքին ոիթմով, հակադրութեան նախնականութեամբ, հայի այսաշխարհային լինելութեան օրէնքով....:

Երկու դեպքում էլ, սակայն, թէ կարօտի և թէ նահանջի գրականութեան պարագայում, գրողը, պատկերելով հային ու նրա կերպարը, ժամանակի հարցը գեղագիտական առումով լուծում է միասնականութեան օրէնքով. առաջինի կառուցուածքում այն բնագրի ենթատեխստային համակարգում է «լոռում», երկրորդում՝ այն իրական ժամանակի «արտակենաւում» է երեանում՝ կրելով բնագրի ենթատեխստային ժամանակի ոիթմը, այսինքն՝ գոյաւորում է նրանով....: Ներկայի (ժամանակի) այդ խարիսխը պատմական ոչ վաղ անցեալով շաղախուած «երկիրն է», որի լինելութիւնը հոգենոր նեղքումներ է պարտադրում թէ, օրինակ, Համաստեղի կերպարին, թէ Շահնուրի....:

Գրականագիտութեան մէջ այս ուղղութիւնների տարանջատումը սակայն հանգեցրել է մի մտայնութեան, որ ասում է յանախ Համաստեղի և կարօտի գրականութեան վերլուծական տարրերակներում: Այսպէս, ասելով, կարօտի գրականութիւնը պատկերում է նախաեղեննեան հայ գիւղը, հայ գիւղացուն, որի համար գոյութիւն չ'ունեն ներկան և ապագան, այլ միայն՝ անցեալը, այնուհետև եզրակացնում են՝ թէ այդ արձակում գերիշխող է ոռմանտիկական (վիպապաշտական) հայեցակետը: Ճշմարիտն ասած, այս ըմբռնումով գրականութեան պատմաբանները հա-

կասութեան են հանգում նախ և առաջ իրենց առարկայի և մերողի վերլուծական համակարգում երկու առումով՝ ա) ոռմանտիկական հայեցակետը գեղագիտական-պատմական այլ համամկարգ է, որն ունի իր ներքին օրէնքները՝ կառուցուածքային-տիպարանական առումով, թանադոյթի առումով նշելով դարասկզբի բնաշխարհիկ իրապաշտներին, որոնց շարունակել են սփիւրքահայ գրողները (օրինակ՝ Համաստեղը, որի արձակը Հ. Թլկատինցու, Զարդարեանի, Յովի. Թումանեանի աւանդների կրողն էր, ոռմանտիկներ չեն եւ նշում են բնականարար այն ուղղութիւնը, որը կառուցուածքային առումով, իրական աշխարհի իրացման իր «օրէնքներն» ունի, մերողի սինթեզման (համադրման) պատմական իր ուղղուածութիւնը...: Հետևարար, հակասութիւնից խուսափելով, ժամանակի հարցը պէտք է մեկնարանել միայն «գեղարուեստական ժամանակի» հասկացութեամբ, որով հերքում է այն դրոյթը, թէ կարօտի ուղղութեան հետևողները ոռմանտիկական հայեցակետի կրողներ են: Աւելին, Ա. Չոպանեանը ևս խօսելով Համաստեղի արձակի մասին, նկատի ունի այն մերողը, որը օգնում է ոգու գոյութիւնը պատկերելու... թերևս գեղարուեստական մի ժամանակում, որ հոգևոր /իմա՝ յաւերժական/ ժամանակն է: Ուստի՝ «Համաստեղ հարազատ և վնիտ ձայն մըն», որուն մէջէն գիտը իմքնեզնենքն կ'երգէ»: Խոկ գրողը «մտած է իր նկարած տիպարներուն մորքին մէջ», «...հեղինակը թափուն է անոնց նէշ, անոնց շարժիչ ուժն է»<sup>1</sup>: Նոյնիսկ աւելին, ըստ Չոպանեանի, Համաստեղը «Շիրվանզադէն ի վեր մեր մէջ երևած ամենէն նշմարիտ ու կատարեալ իրապաշտն է»<sup>2</sup>: Հետևարար, հարցը հոգևոր աւանդոյթի և ժամանակի փոխհարաբերութեան, միմեանցով իրականութիւնը վերստեղծելու հոգևոր մղումն է, որ Համաստեղին տարաւ, գոնի 20-ական թուականներին («Գիւղը» /1924/ և «Անձրև» /1929/ ժողովածուներում) եթէ ոչ Չոպանեանի ասած «իրապաշտութեան» հունով, այլ ժամանակը (լայն իմաստով՝ համադրելու և նոր, հոգևոր-ժամանակի պարագիծը ստեղծելու հունով: Ուստի, կարելի է ասել, որ Համաստեղը կարօտի գրականութեան սկզբնաւորողն է, որ մեր գրականութեան մէջ ստեղծեց իր հոգևոր աշխարհագրութիւնը՝ բնաշխարհիկ Խարբերդի Փերչենն եղերքի պատկերահանումով: Այնուհետև Համաստեղի հետևութեամբ մեր գրականութիւն ներբերուեցին Ռոդոսքոն, Շապին-Գարահիսարը, Հիւսնիկը, Կապոյտ Երզնկան, Արմտանը՝ շնորհիւ Վ. Շուշանեանի, Ա. Հայկազի, Բ. Նուրիկեանի, Յ. Մնակուրու:

Ուրիշ բան, սակայն, կարօտի գրականութիւնն ունէր իր օրինաշփութիւնն և պատումի գեղագիտութիւնը. իրականութիւնը պատկերում էր երազային-իդեալական (կարելի է ասել՝ հոգևոր), բացակայում էին տեխնում սոցիալական-հասարակական բախումները, բայց կար մի ներքին դրամա բնագրի ներսում ու ենթատեխնուային ժամանակի պարագծում, որ երբեմն այս գրողների արձակում գերիշխող էր դարձնում հուզական-նկարագրական տարրը, պատումը իշեցնում ֆարուլային-պատումի աստիճանի, ինչը տուեալ արձակը երթեմն

<sup>1</sup>. Ա. Չոպանեան, Երկեր, ՀԴԳ, Երևան, 1988, էջ 760.

<sup>2</sup>. Նոյնը, էջ 762.

Ենթակայական է դարձնում պատմական իրականութեան համեմատ (գրողի անձի, հասարակական կեանքին պատկանելութեան առումով և այլն): Այսինքն, այս պարագայում, նշանակութեան ձեռքբերելով զուտ պատմական ենթակայութեան մէջ, երբեմն, որոշ գործերում, գրապատմական արժեքի է վերանում այն: Սակայն կարօտի գրականութեան առաւել յաջողուած բնագրերում, գրողը՝ սխեմազերծելով իրականութիւնը, օրինակ՝ Համաստեղի «Գիւղը» և «Անձրկը» և Մնանուրու «Կապոյտ լոյսը» (1958), «Արմտան» (1966), «Կոռունկ», ուստի կուգաս» (1984) պատմուածքների պարագայում, մենք տեսնում ենք իրականութեան և ժամանակի համադրում, որի միջոցով այդ արձակը նշանակալից և արժեքային համակարգի է վերանում և գրական-պատմական պրոցեսում (ընթացքում) և նրանից դուրս....:

Թերևս կարօտի գրականութեամբ և նրա ընթացականութեամբ է պայմանաւորուած «Նահանջի» գրականութեան սկզբնաւորումը: Եթէ պատմականօրէն ընդունենք, որ կարօտի ուղղութիւնը հակադրութեան մի եղբն է, որ ծնում է գրականութեան աւանդոյթից, ապա նրա զարգացումը ու «ճեղքումը» նանաչողութեան եզրով, ծնում էր նոր խնդիրներ կամ՝ պատմականօրէն, նոյն խնդրի հանգոյցում ժամանակի հարցը «զատում» էր «զեղարուեստական ժամանակից», ասել է թէ բնագրի ենթատեստից վերանում և հանդիպադրուում էր իրական ժամանակին: «Նահանջի» գրականութիւնը, այդ իսկ պատճառով, աւելի ուշ է սկզբնաւորուում: Ֆրանսիական գաղթօջախում, 30-ականների սկզբին, ի տարբերութիւն ամերիկեանի, գեղագիտական նոր հուն էին բացում «Մենք» հանդէսի շուրջ համախմբուած գրողների խումբը իրենց հանգանակներում ու երկերում: Պատճառը, ինչպէս նշուեց, հարցադրումների տարբերութիւնը չէր, այլ աւանդոյթի իւրացման, պատմական եզրում նոր հոգևոր արժեքների և գոյարանութեան հարցն էր, որ հայ գրողին պարտադրում էր ոչ միայն «ինքն իր մէջ», այլև դրանով՝ արտակեղեկի տակ թաքնուած, ոգու ուղիով մերձնեալ հայի աշխարհին ու նրա ընթացքին: Գեղագիտական առումով խնդիրը լայն է, թերևս պատմականօրէն նանաչելի: Ուստի իր սկզբնաւորման պահից, բնական է, նահանջի գրականութեան եզրը երբեմն գրական առումով ևս նահանջներ ունեցաւ:

Գրականագիտութեան մէջ այս հարցը ևս տարտղնուում է յանախ՝ առանց հաշուի առնելու տեսական հանգանակներում տրուած դրոյթի՝ լայն համակարգում խարսխուած և դրանով սկզբնաւորուուղ ընթացքը, որը ծաւալում է ամրող դարի գրականութեան շղթայում մինչև 80-ականները: Նահանջ առնուրը, որ պարագլուխն է այս շարժման, իր ծրագրային՝ «Նահանջ առանց երգի» (1929) վեպում գրում է. «Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ, կը նահանջեն բարք, ըմբոնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն... և մենք դեռ կը նահանջենք բանիւ և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղայ, մեղայ, Արարատին»:

«Մենք»-ը և Նահնուրը առաջադրելով գրականութեան նոր ոճի, ձևի խնդիրը, հակասութեան մի եզրով խզում էր կապը աւանդոյթի հետ: Անցեալը, իբրև ժամանակի ըմբոնում, հետևաբար և՝ հոգևոր արժեքների համակարգ, բացակայում է: Այսպիսով, պատմական գեղագիտութեան

համակարգում Շահնուրը յայտնաբերում էր նորի (թէև ժխտող) խնդիրը, որը զարգացման ուղին է: Սակայն, պատմական բացասումով, Շահնուրը «վերստեղծում» է կրկին աւանդոյքի պարագան արդէն աւելի ուշ նորագոյն սփիտքեան գրականութեան ծիրում:

Խնդիրն աւելի լայն է, երբ կրկին անդրադառնում ենք «նահանջի» գեղագիտական ըմբռնումներին: Ես-ի անդրադառնում («Մենքի» պարագայում) հայի համամարդկութիւնը չափման միաւոր է, որ հերքում է հենց ինքն իր կեղեկի մէջ պարփակուած ժամանակի հասկացութիւնը: Զուտ պատմական իմաստով իր դարի մարդու (և հայի) բարոյական ըմբռնումները ժխտելով, ժխտում է նաև դրա հոգեոր ժամանակային-պատմական ըմբռնումը: Բնագանցական (իուցիոնայ) համակարգում «նահանջի» Պիեռ-Պետրոսը սակայն այդ ընկալման եզրը հասկանում է համատիեզերական, «ես անցեալես բարձր», անդրկեցային ընկալումով, որ անձին տրոհելով իր ես-ից, այնուհետև յանձնառելով նրան հասարակական ես-ում իր լինելութեան և ինքնութեան կերպը, անգամ բարոյական «նահինում» չի զրկում կերպարին անհատականութեան գծերից, ինքն իր դէմ և իր միջավայրի դէմ մաքանելու և հաստատելու նշանակութեան երևութաբանական (ֆենոմենոլոգիական) յատկանանութիւնից: Ուստի, իր յոդուածներից մէկում, Շահնուրը, արծածելով աւանդականի և նորի հարցը, իրապաշտութեան և ոռմանտիզմի խնդրադրոյթում բացանելով վերջինը, գրում է. «Գրագետը կը մոռնայ, թէ գրականութիւնը... անձնական փորձառութեան հարց է, և մարդ իր տեսածն ու ապրածն է, որ կրնայ տալ շերմութեամբ... հակառակ... աշխատութիւնը կեղծ ու շինածու կ'ըլլայ»<sup>1</sup>: Այսպիսով, մի կողմից Շահնուրը խօսում է աւանդոյքի պահպանութեան դէմ: Այնուհետև, ընկալելով ժամանակն իրքի գոյաբանութիւն, Շահնուրը անձին քննում է ինքն իրենով, իր ապրած ժամանակով: Դրանից է բխում նաև Շահնուրի գրականութեան արդիականութեան ըմբռնումը: Հետևաբար, ըստ հեղինակի, պէտք է սահմանագատել գրականութեան մէջ գեղարուեստականութիւնը և պատմութիւնը: Գրականութիւնը պատմութեան վկայութիւնը չէ և ոչ էլ դասագիրքը: Շաֆֆին, ըստ Շահնուրի, զուտ պատմութիւն է գրել, մինչդեռ «գրականութիւնը ազգային պատմութիւն չէ, այլ՝ գրականութեան նիւթը անհատն է, մէկ հատիկ անձ մը... իր պարտէզով, անձնականութեամբ»: Հետևաբար, ընդհանրացնում է տեսարան Շահնուրը՝ «Արուեստին գաղտնիքը հոդ է՝ անսահմանը ցոյց տալ սահմանաւորի մէջ»<sup>2</sup>: Այսինքն, անձի և անհատի այն ներքին դրամայում, որ վերապրում է կեանքը նշանակութեան, լինելութեան տիեզերական պարագծում, որն ինքն է՝ «կեանքի փիլիսոփայութիւնը»:

Շահնուրը, իհարկէ, աւելի քննադատ է, յետոյ նոր գեղարուեստագէտ թէ յօդուածներում, թէ գեղարուեստական արձակում: Հետևաբար «նահանջ առանց երգի» վեպում, «Հարալեզներու դաւանանութիւնը» պատմուածքա-շարում, նա իրացնում է Շահնուր-տեսարանի դրոյթները, որի պատճա-

<sup>1</sup>. Շ. Շահնուր, Երկեր, գիրք 2-րդ, Երևան, 1985, էջ 80.

<sup>2</sup>. Շ. Շահնուր, Երկեր, գիրք 2-րդ, Երևան, 1985

ոռվ պատմականօրէն յանձնառւում է ասես իւրատեսակ գեղարուեստական մի «սխեմա», որ միշտ չէ կենսունակ իրրև կառոյց: Պատմականօրէն թերևս կարելի է ասել՝ ժամանակի, կեցութեան ժամանակաշրջանի ըմբռնումներում Շահնուր-տեսարանը աւելի կենսունակ է, այսօր էլ զարգացող, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ «Մենքի» գրողների, սփիւր-ժահայ գրականութեան հետագայ ընթացքի վրայ: Սա է պատճառը, հաւանաբար, որ Շահնուրի «գեղագիտութեան» ներքին հակասութիւնները առիր են տուել բազմաթիւ մերժումների և բննադատութեան, ինչպէս օրինակ, Ա. Շառուկիանի յօդուածաշարը «Նաիրի» պարբերականում՝ «Խմացական վիժանք» խօսուն վերնագրով: Անգամ այնպիսի մի անհատականութիւն, իւչպիսին Վ. Շուշանեանն է, և որը կրում է «Մենքի» ազդեցութիւնը, Շահնուրի «Պույնուզըլները» (Եշանակում Է՝ կոտոշաւոր) նոյն հանդէսում տպագրելուց յետոյ, գրեց յայտնի, համարեայ բանաւորի վերածուած հետևեալ խօսուն վերնագրով յօդուածը՝ «Մարդ մը, որ Արարատ չ'ունի հոգիին խորը»:

Ինչ խօսք, սրանով չեն սպառուում Շահնուրի տեսական մտահայեցութեան ընդգրկումները: Կարելի է թերևս նշել աւանդոյթի, մասնաւորապէս Նարեկացու շահնուրեան ըմբռնման, հայութեան՝ որ չկարողացաւ Արևելի և Արևմուտքի միջև «դիրք մը բռնել» և «աւելորդ ոհմակ մըն է», ընդհանրապէս գրականութեան դերի շահնուրեան ընկալման՝ պատմական անցեալից կտրուելու, գրականութեան մէջ նոր ձևի, յուզականութեան և լալկանութեան, ոգիի բուլակամութեան, սեռի հասկացութեան և այլնի մասին: Սակայն մի բան հստակ է. Շահնուրը բննադատ է նախ և առաջ արձակում, հայացքով հառուած դէպի վաղուայ օրը և նոյնքան կատարեալ ու հակասական, ինչպէս հայի կեանքը, նակատագիրը, պատմութիւնը: Պատահական չէ, որ այս գրողի ազդեցութիւնը մեծ է մինչև այսօր: Նրա ազդեցութեամբ է, որ սփիւրքի գրականութեան մէջ այդ ուղղութեանն են հարում Զ. Որբունին, Հրաչ Զարդարեանը («Մեր Կեանքը» (1934)): Նահանջի գրականութեան ազդեցութեամբ են վերափոխուում Բիւզանդ Թօփալեանը, Նշան Պէշիկրաշլեանը, Շ. Նարդունին իր խոռվարաւութեամբ, վերջապէս՝ Վ. Շուշանեանը, որի արձակը կարօտի և նահանջի սահմանագծի եզրին է թերևս....

Ինչ խօսք, 20-30-ականների սփիւրքեան արձակը հարուստ է ներքին հակասութիւններով, տարտղնումներով, գեղագիտական որոնումներով և, բարերախտաբար, «աւարտուն» չէ թերևս իր հեռապատմական ընթացքով:

## Սուրէն Աբրահամեան